Նորին Օծութեան Ճանապարհորդութեան նկարագիրը մանամբ Քաղուած է Արձագանքի Բագուի թղթակցութիւնից և հեռագիրներից։

—

Մայիս, Յունիս, Յուլիս և Օգոստոս ամիսների Արարատներում հրատարակած յօդուածների հեղինակներին հասանելի վարձատրութիւնք վճարուեցան։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՆՔ.

Շուշեցի Բարեպաշտուհի տիկին Թագուհի Հախումեանց իւր հանգուցեալ առն Պետրոսի Հախումեանց բանաւոր կտակի համաձայն նուիրել է մի հարիւր ռուբլի ի նպաստ շինութեան Մայր Տաճարի Ս. Էջմիածնի.

Աստուած ի հաճոյս իւր ընկալցի և լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն ամէն։

—

Կարդալով «Արարատ» ամսագրում և այլ լրագրերի մէջ մեր Միածնաէջ Սուրբ Տաճարի վերաշինութեան լուրը և այդ մասին եղած նուիրատու. անձանց անուանացուցակը «Արարատի» մէջ, ես էլ ոչ իբրև այն մշտական «ազգի բարերարները», որոնք միշտ իրանց առատ վաստակից լիաբուռն բաժին են հանում ոչ միայն Մայր Աթոռոյս այլ և մեր ուրիշ շատ բարեգործական հրմնարկութիւններին, և ոչ իբրև այն պատահական հարուստները, որոնք իրանց հարիւրները և հազարները նուիրելով լոկ իրանց հարստութեան գոյութիւնն են ուզում ցոյց տալ աշխարհին, այլ իբրև իմ մօրս հարազատ և երախտամատոյց որդի, մի գիւղական չքաւոր քահանայ ուզեցի լոկ իմ զգացուած սրտի ուրախական թելադրութիւնը կատարած լինել, այդ ամենասուրբ և նուիրական գործին օժանդակող անձանց հազարին՝ իմ կոպէկներս ևս խառնել։

Ընդունեցէք ուրեմն, ծերունի ճակատիս արևահոս քրտանց պտուղը, մի տասը ռուբլի (10ռ.) ։ իբրև այն այրի կնոջ լումանը որ այն քան ուրախութեամբ ընդունեց մեր ամենի Փրկիչ Յիսուս Քրիստոս։

Շատ համարեցէք և այս չափը Բէկլարքեանդու նման մի ամենայետին գիւղի քահանայից, որ թէև աղքատ, բայց

որի սիրտը միշտ հարուստ է տրոփում դէպի իւր Մայր Աթոռը Սուրբ Էջմիածին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ԱՂԲԱԼԵԱՆՑ.

1888 Օգոստոսի 9-ին
Բէկլարքեանդ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Գերապատիւ փոխանորդն Թեմական Երևանայ Սրբազան Սուքիաս Եպիսկոպոսն, ըստ բարեհաճութեան Նորին Վեհափառութեան տուեալ է աստիճան ծայրագոյն վարդապետութեան յաջորդին հին Նախիջևանայ, Բարեշ. Յովսէփ Վարդապետի Փինաչեան։ Նոյն և ձեռնադրեալ է ի կոչումն Աբեղայութեան զվանահայրն անապատին Տաթևու զՊարգիսն Տէր Վարդանեան, թողլով զնա դարձեալ ի նմին պաշտաման։

Ի 24ն հոկտ. ըստ հրամանի Սրբազան Սինօդին համարաւ 2357, բարեշ. Անտոն Վարդապետն Վարդազարեան արձակեալ ի պաշտօնէ վանահայրութեան Զարեբայ վանից ըստ խնդրանաց իւրոց՝ կարգեալ է վանահայր վանուց սրբոյն Գրիգորիսի Ամարասայ։

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՔ

ԳՈՐԾԱԴԻՐ — ՄՆԱՑՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Կ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՑԱԿԻՆ.

Ցանձնաժողովս կը փութայ ծանուցանել թէ Սահակ Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան Հանդէսն՝ զոր Բարեյիշատակ Հանգուցեալն հաստատած է Ազգային Պատմութեան և Դպրութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց համար, տեղի պիտի ունենայ ի տօնին Սրբոց Թարգմանչաց յառաջիկայ 1889 տարւոյ, և կը հրաւիրէ այն ամեն բանասէրներն որ որոշեալ նիւթերուն վրայ ո՛ և է երկասիրութեամբ կուզեն մասնակցել, փութան մինչև յառաջիկայ Յունվարի սկիզբն յու-